



"ԿԱՍԵՑՈՒՄԸ"

ՇՈԳԻԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

(ԶԻՔ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ԸՆՏՐԱՆՔ)

Հայաստան-Թուրքիա փրոթոքոլային արձանագրությունները (թէ՞ համաձայնությունները), որոնք ստորագրուեցան 10 Հոկտեմբեր 2009ին, հայ ժողովուրդի մեծամասնության համար մերժելի էին, հետեւապէս, ի վերջոյ՝ վիժելի, որովհետեւ՝

– Թուրքիան կը մնար անվստահելի "գործընկեր" մը, ոչ միայն իր դառն փորձառություններով, այլեւ իր քաղաքական անպարարություններով, ատոնց ցուցանիշը նկատելով իր սահմաններու փակումը Հայաստանի դիմաց եւ անոնց բացումը պայմանադրելով Ղարաբաղի վերադարձով... Այրաբեյճանին:

– Նախապայմաններով համաձայնութիւն գոյացնելու իր սովորական լարախաղացութիւնները, միշտ միակողմանի շահոյթներ ապահովելու ընչաքաղցութեամբ, մանաւանդ շահագործելով տուեալ շրջանի քաղաքական պայմանները ու նոյն ծիրէն ներս իր դերակատարութեան շեշտաւորումը:

– Եւրոպական Միութեան պատկան կողմերուն հասկցնելու իր բարի (°) դիտաւորություններն ու պատրաստակամությունները, ընդունելի տարապումի մը հասնելու Հայաստանին հետ, բարենիշ մը

արձանագրելու յաւակնութեամբ:

– Հայ ժողովուրդին մէջ (իմա՝ Հայաստանի եւ Սփիւռքի) գոյացնելու խրամատ մը, քանի համաձայնութիւնը պիտի ըլլայ պետութիւն-պետութիւն, ուր Սփիւռքը խօսք չի կրնար ունենալ, իսկ ինք կրնայ "պարտադրող"ի դեր մը ստանձնել, մեծապետական, կարգ մը երկիրներու պօրակցութեամբ:

Կարելի է այս շարքը երկարել, բայց Անգարայի վարիչներուն հաշիւները սիսալ դուրս եկան, որովհետեւ Սփիւռքը, աւելի ճիշդ՝ իրաւատէր տարագիր հայութիւնը ոչ միայն ծառայաւ այդ արձանագրություններուն դէմ, այլեւ հակադրուեցաւ Հայաստանի գործող իշխանութիւններուն, ընդ հովանեաւ նախագահ Սերժ Սարգսեանի անհամատեղելի տնօրինումներուն:

... Ու պատահեցաւ անխուսափելին:

Թուրքիա յամառօրէն իր պայմանները հետապնդեց, մասնաւորաբար պահանջելով Ղարաբաղը, այլապէս սպառնալով սահմանները փակ պահել, իսկ հայութեան մեծամասնութիւնը՝ արեւելահայ թէ արեւմտահայ հատուածներով, հիմնովին անընդունելի նկատեց խաբուսիկ արձանագրութեանց տառն ու ոգին, մինչեւ որ նախագահ Սերժ Սարգսեան ստիպուած եղաւ ստորագրուած փրոթոքոլները յայտարարելու "սպառած", վանոնք... "կասեցնել"ով:

Եթէ այս արարողութեան յանգումը ծանօթ ու յստակ էր շատերուն՝ ի սկզբանէ, անհասկնալին ու տարօրինակը "կասեցում"ի որոշումն էր, իր գործնական ու քաղաքական առումներով, որ բոլոր պարագաներուն կը մնայ նոյնքան մտահոգիչ, որքան էր տխրահոջակ փրոթոքոլներուն ստորագրութիւնը:

Ինչո՞ւ Պրն. նախագահը չգործածեց "վերջացած" կամ "աւարտած" ելլը, այլ գոհացաւ խիստ դիւրաբեկ ու փխրուն



"կասեցում"ով:

"Ֆութպոլային դիւանագիտութեան" նո՞ր վաւելչտ մըն է ապիկա, որ կրնայ, օր մը, "վերակենդանացնել" փրոթոքոլներու նոր տարբերակ մը, սակայն համարեա նոյն բովանդակութեամբ, թերեւս ալ աւելի "բիրտ" պահանջներով:

Առ այդ, նշենք թէ՛ Պրն. Սարգսեան կրկնակի սխալներ գործեց, նախ՝ երբ "առանձնակի" գնաց դէպի պարտուողական փորոթոքոլներու ստորագրութեան, ապա՝ նոյն "առանձնակի"ութեամբ կասեցուց վանոնք:

Ճիշդ է, ան պետականութիւն եւ իշխանութիւն ներկայացնող հեղինակութիւն է, բայց ոչ երբեք՝ բացարձակատիրութիւն, երբ հարց(եր)ը կը վերաբերի հայ ժողովուրդի գերագոյն եւ անվիճելի մէկ թղթածրարին, այս պարագային՝ Հայոց Յեղասպանութեան եւ անոր հետ առնչուող հայկական պահանջատիրութեան:

Իր ուշացած "նախագահական ուղեւորութիւն"ը Սփիւռքի հայաշատ կեդրոնները բաւարար դաս պետք է ըլլային, որ հայ ժողովուրդի Ազգային Գերիւնդիրը նկատուող մէկ հիմնահարցի նկատմամբ, այլեւս կարելի չէր այդպիսի վերաբերմունք ունենալ, առանց գոնէ լսելու տեսակէտը Տարագիր հայութեան:

Նոյն տրամաբանութեամբ, երբ "կը կասեցնէր" փրոթոքոլներու արձանագրութիւնները, որքա՛ն բարացուցական պիտի ըլլար, դարձեալ լսել Տարագիր հայութեան տեսակէտը, խղճի ու ոգիի հանդարտութեամբ:

Հակառակ այս բոլորին, պետք է տարուած ըլլալ մտահոգուելու, թէ փրոթոքոլային արձանագրութեանց փաթեթը ի սպառ փակուած չէ, "կասեցում"ը երբեք այդ չի նշանակեր, մանաւանդ քաղաքական խայտաբղետ բառարաններու մէջ:

Եթէ լրջութիւն, վճռականութիւն եւ անկեղծութիւն կայ փրոթոքոլները ամբողջովին ՋՆՁԵԼՈՒ, ո՛չ "կասեցում"ը, ո՛չ "ստեցում"ը, ո՛չ ալ "առկախում"ը կը փոխարինեն վայն, իսկ անոնք, որոնք կը ճանչնան Սարգսեանի "քարիվմա"յով քաղաքական գործիչի մը նկարագիրը եւ յաւակնութիւնները պետք է հասկնան "կասեցման" բազմիմաստութիւնը:

Սարգսեանի այս մտեցումը ոմանք կը բացատրեն նաեւ "փրոթոքոլային դիւանագիտութեամբ", այսինքն՝ ի վիճակի չէր այլ ընտրանք մը գտնել, բացի "բաց քանալ" մը ունենալէն, քանի "միջնորդ տէր պապա" պետութիւններ այդպէս կը պահանջեն կամ



այդպէս կը պարտադրեն:

Որքան ալ ճիշդ ըլլայ այս վարկածը, պարպագոյն հակապոլեոսութիւնը պիտի ըլլայ նախագահին, առ որ անկ է ըսելու, թէ ինք իր երկրին ու հանրապետութեան նախագահը ըլլալով հանդերձ, չի կրնար իր ժողովուրդին կամքին հակառակ ուղղութեամբ շարժիլ, մանաւանդ երբ ինդիրը կը վերաբերի հայերու դէմ գործադրուած Յեղասպանութեամբ, անոր ճանաչումի անխուսափելիութեամբ ու հատուցումներու հետապնդելիութեամբ:

Եթէ այս չէ եղած (ու հաւանաբար պիտի չըլլայ), "կասեցում"ի, այսպէս ըսած որոշումը, լոկ ժամանակաւոր բեմադրութիւն մըն է, որ կրնայ ունենալ իր նորովի փոփոխակները, այս անգամ աւելի ծանրակշիռ հետեւանքներով:

Ասոր ամենէն ցայտուն օրինակը հանդիսացաւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարին մէկ նոր ձաբոտութքը, որ ստորնագոյն նոր փորձ մըն է հայութիւնը իրար հակադրելու, երբ իր երկրի դիւանագիտական ներկայացուցիչներէն պահանջեց Սփիւռքահայութեան հետ ուղղակի շփուելու միջոցներ գտնելու անհրաժեշտութիւնը:

Տարագիր հայութիւնը պետք է ինքզինք միաձուլէ ու բռնցքանայ, որպէսզի "կասեցում"ը լրիւ շոգիանայ, նոյնիսկ դարակներէն ու ստոնարաններէն անհետանայ, մինչեւ որ ցեղասպանին ժառանգորդները ընդունին ու ճանչնան Հայերու Յեղասպանութիւնը եւ արդար իրաւունքներու հատուցումը:

Այլապէս՝ չի՞ք ուրիշ ճանապարհ եւ ընտրանք:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ
28 Մայիս 2010